

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դարերի պատմություն ունի հայ գիրքն ու գրականությունը: Բայց այն իր վերածնունդն ու բուռն զարգացումն ապրեց Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո միայն:

1921 թվականի հունիսի 10-ին հրապարակվեց դեկրետ Պետական հրատարակչություն կազմակերպելու մասին, որի առաջին կետում ասված էր.

«Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սահմաններում մամուլի և հրատարակչության վերաբերյալ բոլոր գործերը պետական օրգանում միացնելու և նրանց գործունեությունն ուժեղացնելու նպատակով, Լուսժողովատնի կից կազմակերպվում է Պետական հրատարակչություն, որի մեջ ձուլվում են բոլոր ժողովրդական կոմիսարիատների և մասնավոր անձերի բոլոր հրատարակչական ձեռնարկությունները»:

Գեղարքար ստորագրել էին Ասքանազ Մուսվաթյանը և Աշոտ Հովհաննիսյանը:

Պետական հրատարակչության գործունեությունն առաջին տարիներին կապված էր մեծ դժվարությունների հետ՝ անհրաժեշտ պոլիգրաֆիական բազայի բացակայության պատճառով:

Դաշնակցությունից ժառանգություն էր մնացել մի կրթու սպառարական մեքենա և աննշան բանակությունը հնամաշ տառեր: Եվ չնայած դրան, Սովետական իշխանության առաջին շրջանում էլ աննախընթաց տեմպերով աճում էր հրատարակչությունը: Բավական է հիշել, որ 1918—1920 թվականներին՝ դաշնակցության տիրապետության ժամանակ, Հայաստանում լույս էր տեսել ընդամենը 19 անուն բրոշյուր-գիրք, իսկ Սովետական իշխանության առաջին տարիներին (1921—1923)՝ 98 անուն գիրք: Բացարձակ թվերով աճ ավելի քան հինգ անգամ, էլ չենք խոսում հրատարակված գրքերի որակի և արժեքի հսկայական տարբերության մասին:

Տարեցտարի աճել ու բազմաճյուղ է դարձել Պետական հրատարակչությունը: Երեսնա-

կան թվականներին Պետհրատն արդեն ուներ չորս տիպի մասնաճյուղ.

ա. սոցիալ-քաղաքական-տնտեսական-գիտական

բ. գեղարվեստական-մանկական

գ. մասսայական

դ. դասագրքերի և օժանդակ ձեռնարկներ

Հետագայում, 1955 թ. դասագրքերի խմբագրությունն անջատվեց Պետհրատից և ստեղծվեց ռեսպուբլիկայի երկրորդ խոշոր հրատարակչությունը — Ուսմանկհրատը:


Իր գոյության 39 տարիների ընթացքում Հայպետհրատը մեր ընթերցողներին տվել է ավելի քան 14 հազար անուն գիրք, մոտ 110 հազար տպագրական մամուլ ծավալով, 100 միլիոն ընդհանուր տպաքանակով: Ըստ որում, էլլե իր հիմնադրման առաջին տարում Պետհրատը, ռեսպուբլիկայի միակ Պետական հրատարակչությունը, տպագրել է ընդամենը 10 անուն գիրք՝ 57 տպագրական մամուլ ծավալով, 21,5 հազար տպաքանակով, այս 1929 թվականին Հայպետհրատը, ռեսպուբլիկայի հրատարակչություններից մեկը միայն, ճիշտ է՝ ամենախոշորը, հրատարակել է 554 անուն գիրք, 5340 մամուլ ծավալով, 4 միլ. 136 հազար ընդհանուր տպաքանակով:

Քանակական աճին զուգընթաց ակնբխ է նաև որակական աճը՝ ինչպես գրքերի գաղափարական ու գեղարվեստական մակարդակի, այնպես էլ դրանց ձևավորման կուլտուրայի բարձրացման և պոլիգրաֆիական կատարման տեսակետից:



Պետական հրատարակչության կազմում այժմ գործում են ութ խմբագրություններ՝ քաղաքական, գիտատեխնիկական, գյուղատնտեսական, գեղարվեստական, թարգմանական մանկա-պատանեկական, կերպարվեստի և երաժշտական գրականություն:

Քաղաքական գրականության խմբագրությունն զբաղվում է մարքսիզմ-լենինիզմի կուսակիների երկերի, պատմության, փիլիսոփայության ու



Գրքի պալատը Երևանում, որտեղ տեղավորված է նաև Հայպետհրատը:

Քաղաքատնտեսության բնագավառներին վերաբերող աշխատությունների հրատարակման գործով, Մարքսի, Էնգելսի, Լենինի աշխատությունները թարգմանվել ու պարբերաբար հրատարակվում են մայրենի լեզվով: Վաղուց հայ ընթերցողի սեփականությունն են դարձել Մարքսի և Էնգելսի «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը», Մարքսի «Կապիտալի» I, II և III հատորները, Էնգելսի «Անտի-Դյուրինգը», «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», «Բանվոր դասակարգի գրությունն Անգլիայում», «Բնության դիալեկտիկան» և այլ աշխատություններ: Իր գործունեության բոլոր տարիներին Պետհրատը մեծ սիրով ու խնամքով հրատարակել է Լենինի աշխատությունները հայերեն, և՛ առան-

ձին գրքերով, և՛ բազմահատոր հրատարակություններ: Այժմ տպագրության է պատրաստվում Վ. Ի. Լենինի երկերի 38-րդ հատորը:

Քաղաքական գրականության խմբագրությունը մասնաձևական ընթերցողներին գրքեր է տալիս մի քանի ուշագրավ մատենաշարներով, դրանք են՝ ՍՄԿՊ XXII համագումարի որոշումները պրոպագանդող, կոնկրետ և կոնոմիկային վերաբերող, կոմունիստական աշխատանքի բրիգադների մասին, օգնություն ՍՄԿՊ պատմությունն ուսումնասիրողներին, գրականություն գիտական սոցիալիզմի վերաբերյալ, նշանավոր մարդկանց կյանքը, մեմուարային, գիտա-աթեիստական, պարտիական աշխատողի գրադարան, գրականություն հայ մատենագիրների մասին և այլն: Խմբագրությունն օպերատիվ

կերպով թարգմանում և ընթերցողներին է հասցնում Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ուղենիշ որոշումները: Վերջերս մասսայական տիրաժող լույս տեսավ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի պատմությանը» հայերեն:

Գիտա-տեխնիկական գրականության խմբագրությունում կենտրոնացված է արտադրական ինժեներիական, գիտական ու գիտա-մասսայական, տեղեկագրերի, բառարանների և օրացույցների, ֆիզկուլտուրայի և սպորտի ու սպորտա-լուսավորական գրականության հրատարակումը:

Լեռնագրա-տեխնիկական գրականության հրատարակումը անհրաժեշտ թափ ու ծավալ է ստացել վերջին տարիներին: Տպագրվում են բրոշյուրներ ու գրքեր արդյունաբերության ու շինարարության տարբեր ճյուղերում աշխատող ինժեներա-տեխնիկական կազմի ու բանվորների, բուհերի և տեխնիկումների ուսանողների համար: Ուշագրության արժանի է «Օգնություն արտագրություն գնացող սկսնակ բանվորներին» մատենաշարը. Լեռն-երեք մամուլ ծավալ ունեցող բրոշյուրներում հանրամատչելի ձևով կշարադրվի Կալին թևում, թե ինչպես դառնալ փականագործ, իսկառ, ֆրեզերող, զոգող, ձուլող և այլն:

Լեռնագրա-տեխնիկական գրականության հրատարակման գործը պատշաճ հիմքերի վրա դնելու, արտագրության մարդկանց պահանջները մալրելի լեզվով հրատարակվող բարձրարժեք գրականության մարդկանց համար վերջերս նախաձեռնվող գործում Գիտա-տեխնիկական գրականության խմբագրության բազայի վրա կազմակերպվեց գիտա-տեխնիկական հրատարակչություն:

Գյուղատնտեսական գրականության խմբագրությունը նախապատրաստում և հրատարակում է ուսպուրիկայի գյուղատնտեսության բոլոր ճյուղերին վերաբերող, ինչպես և ուսումնական կազմակերպության գրականություն: Թարգմանաբար լույս տեսնող գրքերը փոքր տոկոս են կազմում այստեղ, հիմնականը ինքնուրույն գրականությունն է, որն ստեղծվում է ուսպուրիկայի և նրա առանձին շրջանների կոնկրետ պայմաններից ու պահանջներից ելնելով: Խմբագրության աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունեն հայաստանի անվանի գիտնականներն ու գյուղատնտեսության բնագավառի պրակտիկ աշխատողները: Տպագրվում են ուսումնական ձեռնարկներ, ագրոնոմիական, անասնաբուժական-անասնաբուծական, գյուղատնտեսության կազմակերպման և էկոնոմիկայի, բնության պաշտպանության, առաջավոր փորձի վերաբերյալ գրքեր: Լավ բնագրերով գտավ «Կոլտնտեսային գյուղի մարդիկ» ակ-

նարկների մատենաշարը:

Պետական հրատարակչության սլանի մոտավորապես 60 տոկոսը այժմ կազմում է զեղարվեստական գրականությունը: Հայ ընթերցողն ամեն տարի ստանում է ինչպես հայ, ուս. համաշխարհային գրականության կլասիկների, այնպես էլ ժամանակակից գրողների բազմաթիվ ստեղծագործություններ՝ առանձին գրքերով ու հատորներով: Միայն 1959 թվականին հրատարակվել է շուրջ 200 անուն գեղարվեստական, արվեստագիտական, մանկական ու դրականագիտական գիրք: Հատորներով ու առանձին գրքերով լույս են տեսել Խ. Արուստյանի, Մ. Նալբանդյանի, Բաֆու, Նիկոլայեզյանի, Հ. Պաբոնյանի, Նար-Դուրի, Հ. Թումանյանի, Պ. Դուրյանի, Մուրացանի, Գ. Զոհրապի, Մ. Մեծարենցի, Վ. Տերյանի, Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի և հայ մյուս կլասիկների ստեղծագործությունները: Ուշագրության արժանի երևույթ կլինի Նարեկացու «Մատան ողբերգություն» պոեմի աշխարհաբար հրատարակությունը բնագրի տարում, որի թարգմանությունը խնամքով կատարել է Մկրտիչ Խերանյանը:

Սակայն ավելի մեծ տոկոս է կազմում ժամանակակից գրականությունը, մեր այսօրվա կաները պատկերող, կոմունիզմ կառուցող մարդկանց հերոսական առօրյան նկարագրող գեղարվեստական ստեղծագործությունները: Պարբերաբար հրատարակվում են Ստեփան Զորյանի, Նաիրի Զարյանի, Գեղամ Սարյանի, Սիրո Խանգազյանի, Համո Սահյանի, Սիլվա Կապուտիկյանի, Պարույր Սևակի, Հրաչյա Քուրբի և սովետահայ մյուս գրողների գործերը: Հայ գրականության հրատարակման կողմին մեծ տեղ է բռնում նաև քաղցմանակառ զրականությունը. որի մեջ իր պատվավոր բաժինն ունի ուսումնական գրականությունը: Իր գոյության տարիներին Հայպետհրատարակչության գրականության թարգմանաբար լույս է տեսնում 1000 անուն գիրք՝ շուրջ 9000 տպագրական մամուլ ծավալով, 5,5 միլ. բնագրերի տպագրական: Առանձին գրքերով ու հատորներով հրատարակվել են Պուշկինի, Լերմոնովի, Տոլստոյի, Գոգոլի, Չեխովի, Նեկրասովի, Տուրգենևի, Գրեկով, Մալախով, Երկու, Շոլոխովի, Տիտոնովի, Իսկովսկու, Էրենբուրգի, Նիկոլայևի և ուրիշների ստեղծագործությունները:

Թարգմանվում և հրատարակվում են նաև Լուրյանյանի մյուս ժողովուրդների, ինչպես և ժողովրդական դեմոկրատիայի երկրների գրականությունների լավագույն ստեղծագործությունները: Միայն վերջին 10 տարում ագրոնոմիկական գրականության հրատարակվել է 12 անուն գիրք՝ 140 տպագրական մամուլ

ծավալով, մոտ 50 հազար ընդհանուր տպա-
րանակով, վրաց գրականությունից՝ 9 անուն,
մոտ 100 մամուլ, 36 հազ. տպաքանակով:

Հայպետհրատը, բազմաճյուղ հրատարակչու-
թյուն լինելուց բացի, նաև բազմաթիվ հրա-
տարակչություն է: Այն գրքեր է լույս ընծայում
հայերեն, ռուսերեն, փրկերեն, ադրբեջաներեն
և եվրոպական մի քանի լեզուներով: Բազ-
մաթիվ գրքեր են լույս տեսել բուրգ գրողների
ստեղծագործություններից. միայն 1959 թվա-
կանին հրատարակվել է 6 անուն, իսկ 1960-ի
համար պլանավորված է 7 անուն գիրք:

Ուշագրավ երևույթ էր Հայաստանում ապ-
րույ ադրբեջանցի գրողների ստեղծագործու-
թյունների անգղաերկ ժողովածուի՝ «Էդարի
էրմանիտանի» (Գրական Հայաստան) I և II
գրքերի հրատարակումը՝ 1957—1959 թվական-
ներին: Այդ գրքերը ջերմ ընդունելություն
գտան ինչպես մեղ մոտ՝ Հայաստանում, այն-
պես էլ եղբայրական Ադրբեջանում: Բարձր
«Ադարիթի» վերջնականապես՝ թերթի 1958 թ.
հունվարի 10-ի համարում գրված էր.

«Մենք բոլոր ընթերցողների անունից ուղջու-
նում ենք «Գրական Հայաստան» ժողովածուն,
որը սովետական գրականության պատմության
մեջ չափազանց ուրախալի և նշանակալից մի
երևույթ է»:

Արտագրություն մեջ է և շուտով լույս կտանի
«Էդարի էրմանիտանի» երրորդ գիրքը: Հրա-
տարակչությունը մտադիր է շարունակել այս լավ
նախաձեռնությունը, ադրբեջանցի ընթերցողնե-
րին տալ տարեկան մեկ գիրք:

Ժողովրդական գեմեկրատիայի երկրների
գրականությունից 1946—1959 թվականներին
հրատարակվել է 45 անուն գիրք՝ 620 տպա-
գրական մամուլ ծավալով, շուրջ 365 հազ.
ընդհանուր տպաքանակով:

Բազմաթիվ գրքեր են տպագրվել չին մեծ
ժողովրդի կյառիկ ու ժամանակակից գրակա-
նությունից, Լու-Սին, Դին-լին, Գո-Մո-ժո, Բա-
ցզին, Մաո-զուն, չինական կյառիկ պոեզիայի
մի ժողովածու և այլն: Հրատարակվել են՝ Յա-
րույալ Հաչեկի ու Կարել Չապեկի (Չեխովո-
վսկի), Իվան Վազովի և Էմիլ Մանովի (Բուլ-
ղարի), Սենկելիչի ու Ժուկովսկու (Լեհաս-
տան), Բոհան Բեխերի և Աննա Ջեզերսի (Գեր-
մանական Դեմոկրատական Ռեպուբլիկա),
Միխայիլ Սադովյանուի և Պանկու Յաշի (Ռու-
սիայի), Շանդոր Պետեֆիի (Հունգարիա),
Լի Գի-նի (Կորեական Ժողովրդական-Դեմո-
կրատական Ռեպուբլիկա) և ուրիշ հեղինակ-
ների ստեղծագործությունները:

Տեղին է նշել, թե ինչքան լավ են ընդունվում
այդ գրքերը մեր ընթերցողների կողմից և
ինչքան լայն արձագանք է դրանում ամեն մի

գրքի հրատարակում ժողովրդական-գեմեկրա-
տական երկրներում: 1958 թ. հրատարակվեց
բուլղարացի գրող Էմիլ Մանովի «Գեղիչաների
վախճանը» վեպը: Հայերեն հրատարակության
համար գրած իր երկու խոսքում հեղինակը,
գիմելով հայ ընթերցողին ասում է.

«Նա հավատացած եմ, որ «Գեղիչաների վախ-
ճանը» հայ ընթերցողների համար չի հնչի որ-
պես ինչ-որ անծանոթ աշխարհի մասին գրած
պատմություն. վեպը նվիրված է մեր ժողո-
վրդի պայքարին՝ հանուն այն վեհ գաղափա-
րի, որ կոչվում է սոցիալիզմ և որն այսօր իրա-
կանություն է դարձել և՛ Հայաստանում, և՛
Բուլղարիայում: Ոչ միայն պատմական միանը-
ման ուղին ներկայումս, այլև ընդհանուր ճա-
կատագիրն ու տառապանքները, ինչպես և
միևնույն լծի դեմ մղած ազատատենչ պայ-
քարը՝ ավելի հեռավոր անցյալում, կապում են
մեր երկու ժողովուրդներին միևնույն գաղա-
փարներով ու զգացումներով, մի այնպիսի
ընդհանուր հոգեկան լեզվով, որը հասկանալի
ու հարազատ է թե՛ մեզ և թե՛ ձեզ համար: Նս-
անչափ երջանիկ կզգայի ինձ, եթե իմանայի,
որ իմ այս համեստ գիրքը հայ ընթերցողին
կհիշեցնի այդ հարազատության մասին, որ
այնքան թանկ է ամեն մի բուլղարացու հա-
մար»:

Մեր ընթերցողի դրագաբանը խաբեցտարի
հարստանում է աշխարհի մյուս ժողովուրդների
գրականության նշանավոր երկերի հայերեն
թարգմանությամբ: Վաղուց հայ ընթերցողների
սեփականությունն են դարձել Հովհաննիս
«Իլիականն» ու «Ոդիսականը», Դանթեի
«Աստվածային կատակերգությունը», Բոկաչչի
«Դեկամերոնը», Սերվանտեսի «Դոն Կիխոտը»,
Շեքսպիրի բոլոր նշանավոր թատերգությու-
նները, Հայնեի, Հյուգոյի, Դիկենսի, Գյոթեի,
Դյումայի և գրականության այլ հսկաների ան-
մահ ստեղծագործությունները: Շուտով կա-
վարտվի Բալզակի 10 հատորյակի հայերեն
հրատարակությունը:

Կյառիկների հետ միասին թարգմանվում և
հրատարակվում են կապիտալիստական աշ-
խարհի ժամանակակից գրողները՝ Դրայզեր
ու Վիլյամ Սարոյան, Լուի Արագոն և Անդրե
Մտիլ, Վոյնիչ ու Ջոն Ռոդարի:

Կասկածից վեր է, որ աշխարհի տարբեր ժո-
ղովուրդների գրականությունից թարգմանաբար
հրատարակվող այս հարյուրավոր գրքերը հրա-
կալական դեր են կատարում մասսաների կո-
մունիստական գաստիարակության, ժողովուրդ-
ների եղբայրության, կուլտուրական կապերի
ամրապնդման գործում:

Հրատարակչությունը մշակել է թարգմանա-
կան գրականության հրատարակման հեռա-

նկարային պլան: Նախատեսվում է պարբերաբար լույս ընծայել եղբայրական ժողովուրդների գրականության անթոլոգիաներ: Մեծ գոհունակությամբ ընդունվեց ինչպես մեր ընթերցողների, այնպես էլ բելոռուս ժողովրդի կողմից «Բելոռուսական գրականության անթոլոգիան», որը լույս տեսավ մեր հրատարակչության 1957 թ. վերջերին: Այդ առթիվ Բելոռուսիայի Գրողների միության նախագահ Պետրուս Բրոդկյան Հայաստանի Պետական հրատարակչության աշխատողների անունով գրած նամակում ասում է.

«Հաճելի է գիտակցել, որ հայ ընթերցողը մայրենի լեզվով կծանոթանա բելոռուսական արձակագիրների և բանաստեղծների բազմաթիվ ստեղծագործություններին: «Բելոռուսական գրականության անթոլոգիայի» հրատարակումը Հայաստանում մի նոր վառ վկայություն է մեր ժողովուրդների եղբայրական բարեկամության»:

Շարունակելով այս լավ նախաձեռնությունը, տպագրության է պատրաստվում «Վրաց գրականության անթոլոգիան» 50 մամուլ ծավալով. հաջորդը կլինի արևազականը, ադրբեջանականը, ուկրաինականը:

Սովետական Հայաստանի, և ոչ միայն Հայաստանի, ընթերցողները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում սփյուռքահայ գրողների ստեղծագործությունների նկատմամբ, և այդ ստեղծագործություններն իրենց պատվավոր բաժինն ունեն ՀայկաՍՍՀ-ի հրատարակչական պլաններում: Վերջին երկու տարում լույս են տեսել Կարապետ Սիտայի, Գեղամ Սեանի, Գառնիկ Աղաբաբյանի, Բենիամին Նուրիկյանի, Վահե Վահանյանի, Հուրա Ասլանյանի, Անդրանիկ Անդրեասյանի, Վահե Հալիկի և Հակոբ Գույումջյանի ստեղծագործությունները: Արտագրության մեջ է «Արտասահմանի հայ գրողները» ստվարածավալ ժողովածուն, որն ընդգրկում է շուրջ 60 հեղինակի չափածո և արձակ գործերը: Ընդհանրապես նախատեսվում է պարբերաբար հրատարակել սփյուռքահայ պոզիտիվ գրողների լավագույն ստեղծագործությունները:

Պետական հրատարակչության աշխատանքում կարևոր օղակներից մեկը հայ գրականության լավագույն ստեղծագործությունները ռուսերեն թարգմանությամբ համամիութենական ընթերցողին ներկայացնելն է: Միայն 1950 թվականից հետո ՀայկաՍՍՀ-ի հրատարակչությամբ հայ գրողների ստեղծագործություններից ռուսերեն լեզվով լույս են տեսել ավելի քան 160 անուն գիրք՝ շուրջ 1700 տպագրական մամուլ ծավալով, 770 հազար ընդհանուր տպաքանակով: Բաֆֆու «Սամվելն» ու Մուրացանի

«Գեորգ Մարգարտունին» լույս տեսան 1958—59 թվականներին, 200 և 150 հազար տպաքանակով և լայն սպառում գտան Միութենական շուկայում: Այժմ արտագրության մեջ են գրանցվում կամ արդեն լույս են տեսել հայ կուսիկ ու ժամանակակից գրողների մի շարք ստեղծագործություններ՝ Մերենցի «Երկուք թ գարու» վեպը, Նար-Գոսի «Ընտիր Լրկերի» մի հատորակը, Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրին», Արագու վիպակների ու պատմվածքների ժողովածուն, Ալազանի «Հյուսիսային աստղ», Գ. Սևունցի «Գերիներ» վեպերը, Գ. Սարյանի, Ս. Սարյանի բանաստեղծությունների ժողովածուները և այլ գրքեր: Այս երևույթն ավելի մեծ արժեք է ստանում, եթե նկատի ունենանք, որ հայ գրողների բազմաթիվ ստեղծագործություններ ռուսերենի միջոցով թարգմանվում և տպագրվում են աշխարհի տարբեր ժողովուրդների լեզուներով: Եվ իրոք, ինչպե՞ս Վ. Անանյանի «Սևանի ափին» վեպը կթարգմանվեր 17, իսկ Գ. Սևունցի «Թեհրանը» 9 լեզվով, եթե չլինեք գրանց ռուսերեն հրատարակություն:

Մանկա-պատանեկան գրականության խմբագրությունը հրատարակում է գրքեր հիմնականում նախադպրոցական, դպրոցական հասակի երեխաների ու պատանի ընթերցողների համար, լսող ուրում այստեղ էլ գերակշռողը գեղարվեստական գրականությունն է, և՛ ինքնուրույն, և՛ թարգմանական: Այս խմբագրության գծով հրատարակվող գրքերը նպատակ ունեն ընթերցանության սեր ու ճաշակ առաջացնել մանուկ ընթերցողների մոտ, նպաստել դպրոցական ծրագրերի հաջող յուրացմանը, աշխատասիրություն, ազնվություն և շիտակություն սերմանել պատանի ընթերցողի մեջ, պատրաստել կոմունիստական հասարակության պիտանի շինարարներ ու քաղաքացիներ: Ուշագրավ է «Նշանավոր մարդկանց կյանքը» մատենաշարը. հանրամատչելի, ակնարկային լեզվով, 4—5 մամուլի սահմաններում տրվում է այս կամ այն հասարակական, քաղաքական կամ դրական գործչի կյանքի ու գործունեության նկարագիրը, նրանց լավ օրինակով պատանի ընթերցողներին դաստիարակելու նպատակով: Այս մատենաշարից լույս են տեսել արդեն «Միրայել Նալբանդյան», «Բաֆֆի», «Հովհաննես Թումանյան», «Պետրոս Գուրջյան», «Հովսիկ Լիսինյան» գրքերը, իսկ ընթացիկ տարում կհրատարակվեն՝ «Սուրեն Սպանդարյան» և «Պ. Պողոսյան» գրքերը:

Ընթերցողների կողմից լավ ընդունվող գտավ արկածային գրադարանի մատենաշարը, որից լույս է տեսել արդեն 10 անուն գիրք: Ընթացիկ տարում բաժանորդները կստանան 4 անուն ևս: Նախատեսվում է հրապարակված 15 անվան փոխարեն, տալ 20 անուն գիրք:



Նմուշներ Հալպետհրատի հրատարակած գրքերից:

Մանկա-պատանեկան դրականության խրմ-
րադրույթները չորաքանչյուր տարի հրատա-
րակում է մոտ 100 անուն դիրք, 500 մամուլ
ծավալով:

Խրաժշտական գրականության խմբագրությունը, ընկալելով իրականում միակ օրգանն է, որն զբաղվում է Խրաժշտական գրականության արտաբերության գործով. տպագրվում են ինչպես նոտաներ, այնպես էլ ուսումնա-ման-կալիտերական ու Խրաժշտագիտական գրականություններ, տարեկան 170—200 մամուլ ծա-վառով:

Նախատվետական Հայաստանում Նոտային դրականության հրատարակչություն Հլար, հրատարակման այս բարդ կուլտուրան մեզ մոտ տվեալական շրջանի ծնունդն է։ Նոտաներ սկսվ են հրատարակվել քսանական թվականների սկզբներից. սկզբնական շրջանում Նյութերը տպագրվում էին Մոսկվայում և Լենինգրադում, 1937 թվականից՝ Երևանում, Երբ Պրիստոպ-հրատի առաջին տպարանում կազմակերպվում է Նոտատպագրության ցեխ։ Ուշագրության արժանի մի փաստ ևս. դեռևս 1926—1927 թվականներին Հայպետհրատին կից կազմակերպվում է Երաժշտական դրականության խմբագրական կոլեկտիվ՝ Ալեքսանդր Ապենդրյանի նախագահությամբ։ Կոլեկտիվի կազմի մեջ մտնում էին Ռամեսոս Մելիքյանը, Սյուրիդոն Մելիքյանը, վասիլի Դոդոյանը և

Ներուշովան ՏԵՐ-Ղևոնդյանը: Կոլեգիան շախա-
տում էր Երևանում, պատրաստած նյութները
տպագրվում էին Մոսկվայում, որտեղ հրատա-
րակովիչյան դործը գեկավարում էր Արամ
Խաչատրյանը:

Հրատարակվել են Կոմիտասի պարերը դաշնամուրի համար և մենեռզները, շուրջ 16 անուն: Ընթացիկ տարում լույս կտեսնի հայագագային Երաժշտության հիմնադրի երկերի լիակատար ժողովածուի 10 հատույթակի I հատորը: Վաղուց Երաժշտաներ հասարականության սեփականությունների են դարձել Ալեքսանդր Սպենդիարյանի, Լևոնի լիակատար ժողովածուի 11 հատույթակի I, II, III, IV, V, և IX հատորները. տպագրության է պատրաստվում VI հատորը, Հրատարակվել և հրատարակվում են՝ Թ. Մելիքյանի, Կ. Տիգրանյանի, Արմեն Տիգրանյանի, Արամ Խաչատրյանի, Ա. Շահվերդյանի, Հարս Ստեփանյանի, Գայանե Չեփոտարյանի, Առնո Բաբաջանյանի, Գևորգյանի, Տիգրանյանի, Էդ. Միրզոյանի և շատ ուրիշ կոմպոզիտորների և Երաժշտագետների ստեղծագործությունները:



Մեծ է Հայակերհրատի դերը հայագիտության զարգացման գործում: Բազմաթիվ աշխատություններ են տպագրվել հայ ժողովրդի պատմության, փյուռփայտության, արվեստի, հայ

գրականության ու լեզվի, ընդհանրապես հայագիտության վերաբերյալ: Առանձնապես ուշագրավ են հայ անվանի գիտնականներ Մանուկ Աբեղյանի, Հրաչյա Աճառյանի, Հակոբ Մանանդյանի, Ստեփան Մալխասյանի, Գրիգոր Ղափանցյանի, Գարեգին Լևոնյանի, Արսեն Տերտերյանի և ուրիշների աշխատությունները: Այնպիսի դրքեր, ինչպիսիք են Մ. Աբեղյանի ընդհանուր խմբագրությամբ լույս տեսած «Սասնա ծռերը», Ս. Մալխասյանի 4 հատորից բաղկացած Բացատրական բառարանը, Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմությունը», Մանանդյանի «Քննական ակնարկ հայ ժողովրդի պատմության», Դուրնովիչի կազմած «Հին հայկական մանրանկարչություն», կարևոր իրադարձություն են հայագիտության պատմության մեջ:

Հրատարակչությունը նախաձեռնել է հայ պատմիչների աշխարհարար հրատարակման դործը: 1958 թ. լույս տեսավ Եղիշեի «Արդանանց պատերազմը» նրվանդ Տեր-Մինասյանի թարգմանությամբ. շուտով արտագրություն կիջնեն Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» ու Կորյունի «Արք Մաշտոցին»: Հրատարակվում է նաև «Հայ մատենագիրներ» մատենաշարը, ոչ մեծ բրոշյուրներ Եղիշեի, Խորենացու, Ղ. Փարպեցու և մյուսների մասին, ըստ որում նախատեսվում է առաջիկայում այդ մատենաշարը թարգմանել նաև ռուսերեն:

Վերջին մի քանի տարիների ընթացքում լույս են տեսել Հ. Գաբրիելյանի «Հայ փիլիսոփայության պատմությունը» 3 հատորով, Ա. Առաքելյանի «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմությունը» (սկզբից մինչև XIV դարը), Ա. Աբրահամյանի «Հայ գրի և գրություն պատմությունը», Ա. Շահվերդյանի «Հայ երաժշտության պատմության ակնարկները» և բազմաթիվ այլ աշխատություններ:

Կասկածից վեր է, որ այս և նման կարգի հրատարակությունները զգալի չափով զարկ են տվել ու նպաստում են հայագիտության զարգացմանը ոչ միայն մեզ մոտ այլև ընդհանրապես:



Հայպետհրատի հրատարակած գրքերը ոչ միայն մեծ տարածում են գտնում Սովետական Հայաստանի և մեր մեծ Միության հալաշտ վայրերում՝ Ադրբեջան, Վրաստան, Ռուսում, Կրասնոդար և այլն, այլև մեր երկրի սահմաններից դուրս, սփյուռքահայության մեջ, 1954 թվականից գրքի առևտրի վարչությունն ունի արտասահման առավելագույն գրականության բաժին: Ահա այս բաժնի միջոցով ամեն տարի

մեր հրատարակած գրքերն առավելում են ավելի քան 45 երկրներ, այդ թվում՝ ժողովրդական դեմոկրատիայի բոլոր երկրները, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Բելգիա, Հնդկաստան, Իրան, Իրաք, Լիբանան և այլն: Յուրաքանչյուր տարի արտասահման վաճառքի է ուղարկվում ավելի քան 100 հազար կտոր գիրք:

Եվ ինչպիսի՞ սիրով են ընդունում աշխարհի տարբեր ծայրամասերում ապրող հայերը մեր հրատարակած գրքերը, ինչպիսի՞ անհամբերություն են սպասում մեր ամեն մի նոր հրատարակության: Այս մեկ անգամ ևս պարտավորեցնում է հրատարակիչներին ու տպագրիչներին՝ զաղափարական, զեղարվեստական և պոլիգրաֆիական տեսակետից ավելի բարձրորակ գրքեր տալու ինչպես մեր, այնպես էլ արտասահմանյան հայ ընթերցողներին:



Ընթացիկ տարվա նոյեմբերին լրանում է Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40 տարին: Այդ կապակցությամբ մշակված է հատուկ պլան: Նախատեսվում է հրատարակել ռուսացիներին կոչելի և պրոկլամացիաների մի ստվար ժողովածու, որը տպագրության է պատրաստել Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալը: Կհրատարակվեն Ս. Հ. Ռովմասյանի «Սովետական Հայաստանի 40 տարին» գիրքը, Զ. Գրիգորյանի «Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը» Առանձին գրքերով կարվի Հայաստանի արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության ու կուլտուրայի տարրեր ճշտելի զարգացումը 40 տարում: Հրատարակության են պատրաստվում սովետահայ գրականության ընտիր էջերը երեք գրքով՝ պոեզիա, արձակ, դրամատուրգիա, ըստ որում արձակը կտպագրվի ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն լեզուներով: Կհրատարակվի բուրգ գրողների ստեղծագործությունների մի ժողովածու և «Գրական Հայաստանի» հերթական գիրքը ադրբեջաներեն: Նախատեսվում է, երկար ընդմիջումից հետո, հրատարակել հայ ժողովրդի էպոս «Մասունցի Գավիթը» Հակոբ Կոջոյանի նկարներով: Առանձին խնամքով տպագրության են պատրաստվել «Սովետական Հայաստան 40 տարում» և «Երևան» պատկերազարդ ալբոմները, որոնք նպատակ ունեն ոչ մեծ առաջաբանների և լուսանկարների միջոցով ցույց տալ Սովետական Հայաստանի և նրա մայրաքաղաք Երևանի սոցիալիստական վերածնունդը, նրանց աննախընթաց զարգացումն ու

բարգավաճումը Սովետական իշխանության տարիներին: «Սովետական Հայաստանի 40 տարում» և «Երևան» ամսագրերը լույս կտեսնեն հայերեն և ռուսերեն լեզուներով:



Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը ունեն չեն խնայում ժողովրդի նյութական ու կուլտուրական բարեկեցությունը է՛լ ավելի բարելավելու, նրա բոլոր պահանջները լիովին բավարարելու համար: Նույն հոգատարությունը ցուցաբերվում է նաև հրատարակչական գործի նկատմամբ:

Հայպետհրատն աշխատում է տարեցտարի կրճատել պետությունից ստացվող գոտացիան (օգնությունը), և այդ բանի համար կան ռեալ ննարավորություններ: Դրանցից հիմնականն է ճիշտ որոշել ընթերցողների պահանջը և հրա-

տարակել բարձրորակ գրականություն, միաժամանակ բարելավել գրքի վաճառքի գործը, գիրքը պահանջվող քանակությամբ ու ժամանակին հասցնել ամեն մի ընթերցողի, առանձին ուշադրություն դարձնել հայ գրականության լավագույն երկերը ռուսերեն հրատարակությամբ, մեծ տպաքանակներով համամիութենական ընթերցողին ներկայացնելու գործին: Այս միջոցառման նշանակությունը չափազանց մեծ է մայրենի գրականության պրոպագանդման ու մասսայականացման գործում:

Հայաստանի Պետական հրատարակչության աշխատողները ոչ մի քանք չեն խնայի մեր խոտապահանջ ընթերցողի օրավուր աճող պահանջները բավարարելու, նրան բարձրարժեք գրականություն տալու համար:

ԳՐ. ԲԱԿԱՍԿԱՆՅԱՆ

О «РУССКОМ МОРЕ» В АРМЯНСКОЙ КАРТОГРАФИИ

Некогда некоторая часть водной поверхности земного шара носила название «Русское море»; на географических картах значилось это наименование. Между тем ныне нет такой части водной поверхности Земли с подобным названием; да и ни на одной географической карте нашего времени нельзя найти моря с названием «Русское море».

Иные могут полагать, что речь идет о Понте Эвксинском — ныне Черное море, которое в X—XIII веках носило также название «Русского моря». Однако не о «Понте Эвксинском», не о Черном море идет речь.

Какое же это море в прошлом именовалось «Русским»? На какой географической карте имеется море с подобным наименованием?

Собирая и анализируя образцы старинных армянских печатных картографических изданий при выполнении одной нашей работы*, нам пришлось обнаружить на первой армянской карте мира, изданной в 1695

году в Амстердаме, наименование «Русское море» (по-армянски «Русաւ ցօւ»).

Эта первая армянская печатная карта, отображающая мир в полушариях, задумана, изготовлена и издана была далеко от своей родины, в городе Амстердаме, в конце XVII столетия армянами — жителями местечка Вананд древнего исторического округа Гохтан (ныне Ордубадский район Нахичеванской АССР) Матевосом (Матвеем) Ованесяном, епископом Тома (Фомы) и Гукасом (Лука) Нуридджанянами (все трое — родственники).

Матевос был знатоком печатного дела и долго работал в армянских типографиях Западной Европы, а епископ Тома и Гукас Нуридджаняны — образованными армянами своего времени. Матевос в начале 90-х годов XVII в., будучи у себя на родине, в Вананде, убедил своих образованных родственников Нуридджанянов ехать в Западную Европу для издания на армянском языке исторических трудов, печатания географических карт. Прибыв в Голландию в 1693 г., они издадут в 1695 г. указанную первую армянскую карту мира.

Каковы были обстоятельства этого знаменательного факта?

* И. С. Степанян, Армянские картографические издания за 260 лет (1695—1955); краткий очерк. Изд. АН АрмССР, Ереван, 1957, 10 печ. л.